ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՐԴԻ ՆՍՏԱՇՐՋԱՆՈՒՄ

Դեկտեմբերի 1-ին Երևանի Ստ. Շահումյանի անվան պալատում իր աշխատանքն էր շարունակում Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ՝ 10-րդ նստաշրջանը:

Դեպուտատները քննարկեցին «Ռեգիոնում իրավիճակի սրման, Հայաստանի ու ԼՂԻՄ-ի շրջափակման վերացման անհետաձգելի միջոցառումների մասին» Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1989 թվականի սեպտեմբերի 17-ի որոշման իրականացման ընթացքի մասին» հարցը, որի վերաբերյալ հաղորդումով հանդես եկավ Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի տեղակալ, դեպուտատ **Ցու. Խոջամիրյանը:**

Քննարկվող հարցի շուրջը ելույթներով և առաջարկություններով հանդես եկան դեպուտատներ **Ռ. Ղազարյանը, Ֆ. Պետրոսյանը, Ռ. Ենգոյանը, Գ. Կարապետյանը, Ա. Մանուչարյանը, Խ. Ստամբոլցյանը,** ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ **Ս. Խանզադյանը, Օ. Եսայանը՝** Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդ և ուրիշներ: Առաջարկվեց քննարկվող հարցի վերաբերյալ լսել Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի հաղորդումը:

Ինչպես նշվել էր նախորդ հաղորդման մեջ, Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի դիմումի կապակցությամբ Գերագույն խորհուրդը ստեղծել էր որոշման նախագիծ կազմող հանձնաժողով: Դեպուտատ **Լ. Տեր-Պետրոսյանը** հրապարակեց հանձնաժողովի ներկայացրած որոշման նախագիծը: Այդ առթիվ ելույթ ունեցան և իրենց նկատառումները հայտնեցին բանաստեղծուհի **Ս. Կապուտիկյանը, Ս. Գևորգյանը** (ՀՀՇ), դեպուտատ **Հ. Ղանդիլյանը** և ուրիշներ:

Նստաշրջանը միաձայն ընդունեց Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի համատեղ որոշում՝ Հայկական ԽՍՀ-ի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին:

Նախորդ նիստում ԽՍՀՄ Գերագույն խորհրդում «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում իրադրությունը նորմալացնելու միջոցառումների մասին» հարցի քննարկման արդյունքների վերաբերյալ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ **Հ. Ոսկանյանի** հաղորդման կապակցությամբ կազմվել էր որոշման նախագիծ մշակող հանձնաժողով: Դեկտեմբերի 1-ի նիստում դեպուտատների քննարկմանը ներկայացվեց այդ որոշման նախագիծը, որը հրապարակեց հանձնաժողովի անդամ, ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատ **Զ. Բալայանը:**

Առաջարկություններով հանդես եկան դեպուտատներ **Լ. Ղարիբջանյանը, Ս. Մուրադյանը,** ԽՍՀՄ ժողովրդական դեպուտատներ **Գ. Ենոքյանը, Ռ. Վարդանյանը, Գ. Գալոյանը,** պատմաբաններ **Լ. Խուրշուդյանը, Վ. Միքայելյանը, Ռ. Պապայանը՝** ՀՀՇ և ուրիշներ:

Ներկայացված նախագիծը որոշ ուղղումներով և լրացումներով ընդունվեց դեպուտատների կողմից:

Նստաշրջանը որոշում ընդունեց նաև Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ ԱՄՆ-ի սենատի արտաքին գործերի կոմիտեի բանաձևի առթիվ ԽՍՀՄ արտգործմինիստրության հայտարարության վերաբերյալ:

Այնուհետև նստաշրջանն անցավ օրակարգի 5-րդ հարցի քննարկմանը: Գերագույն խորհրդի նստաշրջանի նախորդ նիստում մի խումբ դեպուտատների առաջարկությամբ մտքերի փոխանակությունն չծավալվեց փախստականների տեղավորման հարցի վերաբերյալ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի ընդունած որոշումների կատարման ընթացքի և այդ աշխատանքի ուժեղացման լրացուցիչ միջոցառումների մասին զեկուցման շուրջը և որոշվեց այդ հարցին անդրադառնալ փախստականների հանրապետական հավաքից հետո: Հանրապետության կառավարության կողմից արդեն ընդհանրացվել են տեղի ունեցած այդ հավաքում արված բոլոր առաջարկությունները, ընդունվել է համապատասխան որոշում, որը և դրվեց Գերագույն խորհրդի քննարկմանը: Այդ կապակցությամբ հանդես եկավ Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահի առաջին տեղակալ, դեպուտատ **Վ. Մովսիսյանը:**

Քննարկված հարցի վերաբերյալ ընդունվեց Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի որոշում:

Դեկտեմբերի 1-ի երեկոյան նստաշրջանը շարունակում էր աշխատանքը:

(Արմենպրես)